13 դեկտեմբերի 2024 թ

Արձանագրություն 3

ՀՀԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների (Երևանի Վ.Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց,Երևանի թիվ 105ավագ դպրոց ,Երևանի թիվ112 ավագ դպրոց,Երևանի Ս.Խանզադյանի անվան թիվ 184 դպրոց ,Երևանի Գ.Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց) **կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի արտահերթ N 3 նիստի**

/նիստը հրավիրվել է 2024 թվականի դեկտեմբերի 13-ին/

Նիստին մասնակցել են
ՀՀԿԳՄՍ նախարարության ԿԶՆԱԿ հիմնադրամից խորհրդի նախագահ Լիլիթ Մկրտչյանը, ԿԳՄՍնախարարությունից Անի Խաչատրյանը ,թիվ 112ավագ դպրոցից ուսուցիչ Աշխեն Շահբազյանը,ծնող Մարիամ Զաքարյանը, թիվ 184 ավագ դպրոցից ուսուցիչ Արև Միքայելյանը, թիվ 190 ավագ դպրոցից ուսուցիչ Գոհար Բալեյանը , թիվ 105 ավագ դպրոցից ուսուցիչ Նարինե Միլիտոնյանը , թիվ 92 հիմնական դպրոցից ուսուցիչ Գոհար Զոբանյանը,ծնող Լուսինե Մկրտչյանը:
Նիստին ներկա էին նաև նշված դպրոցների տնօրենները և հաշվապահները:

Նիստից բացակա էին խորհրդի անդամներ Հասմիկ Իսոյանը , Մերի Քալանթարյանը ,Լուսինե Պողոսյանը և Նազելի Ոսկանյանը:
Սահմանված կարգի համաձայն՝ նիստը համարվել է իրավազոր:

Օրակարգում՝

1. Դպրոցների 2024 թվականի ճշտված նախահաշիվների քննարկում 2. 2025 թվականի բյուջեի նախագծի քննարկում 3. 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակների,ինչպես նաև աշխատողներին պարգևատրելու մասին քննարկում 4. Դպրոցի կազմակերպական կառուցվածքի հարցի քննարկում
5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կազմի և դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ներկայացում

Կառավարման խորհրդի անդամները
Լսեցին 1 190 դպրոցի հաշվապահ Գայանե Սաղաթելյանին ,ապա թիվ 184 դպրոցի հաշվապահ Էռնա Մովսեսյանին ,թիվ 112 ավագ դպրոցի հաշվապահ Քաղցրիկ Ղևինյանին ,այնուհետև թիվ 92 հիմնական դպրոցի հաշվապահ Աշխեն Խաչատրյանին:
Վերջիններս ներկայացրին իրենց դպրոցների 2024 թվականի ճշտված նախահաշիվները, որոնք,կարգի համաձայն , նախապես ուղարկվել էին խորհրդի անդամներին՝ հանգամանալից ուսումնասիրելու համար:Յուրաքանչյուր հաշվապահի ներկայացնելուց հետո խորհրդի ներկա անդամները առանձին –առանձին քվեարկեցին՝ միաձայն հավանության արժանացնելով 2024 թվականի ճշտված նախահաշիվները:

Քանի որ թիվ 105 ավագ դպրոցը անցել է կառավարման վարչատնտեսական նոր համակարգի, նրանց՝ 2024 թվականի ճշտված նախահաշիվը չներկայացվեց և քվեարկության չդրվեց

Ի գիտություն ընդունելով առցանց նիստի քվեարկության արդյունքները՝
ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների կոլեգիալ կառավարման խորհուրդը

Որոշեց

Երևանի թիվ 190 ավագ դպրոցի, թիվ 184 ավագ դպրոցի ,թիվ 112 ավագ դպրոցի և թիվ 92 հիմնական դպրոցի 2024 թվակա նի ճշտված նախահաշիվները հավանության արժանացնել:

Լսեցին 2 Խորհրդի նախագահ Լիլիթ Մկրտչյանին:Վերջինս առաջարկեց ,որ դպրոցների տնօրենները և հաշվապահները առանձին հերթականությամբ անդրադառնան օրակարգի 4 կետերին :
Խորհրդի անդամները հավանություն տվեցին Լիլիթ Մկրտչյանի առաջարկին, և առաջինը ներկայանալու համար ձայն տվեցին 190 ավագ դպոցի հաշվապահ Գայանե Սաղաթելյանին:Նա ներկայացրեց իրենց դպրոցի 2025 թվականի բյուջեի նախագիծը,ապա 2024 -2025 ուստարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները:Այնուհետև խոսքը փոխանցվեց թիվ 190 դպրոցի տնօրեն Օլյա Սաղաթելյանին:Վերջինս խոսեց դպրոցի կազմակերպական կառուցվածքի մասին ,ինչպես նաև ներկայացրեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին կարճառոտ զեկույց :

Լսեցին նաև թիվ 184 ավագ դպրոցի հաշվապահ Էռնա Մովսեսյանին և տնօրեն Տաթև Մելքոնյանին ,թիվ 112 ավագ դպրոցի հաշվապահ Քաղցրիկ Ղևինյանին և դպրոցի տնօրեն Օվսաննա Քարամյանին ,թիվ 92 հիմնական դպրոցի հաշվապահ Աշխեն Խաչատրյանին և դպրոցի տնօրեն Ծովինար Մարդանյանին:Նրանք նույնպես հանգամանալից ներկայացրին 2025 թվականի բյուջեի իրենց նախագծերը ,2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները:Տնօրենները խոսեցին իրենց դպրոցների կազմակերպական կառուցվածքների և ԿԱՊԿՈՒ երեխաների մասին:
Խորհրդի անդամները միաձայն հավանություն տվեցին ներկայացված նախագծերին :

Թիվ 105 դպրոցի 2025 թվականի բյուջեի նախագծի և 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն ու հաստիքային ցուցակների,դպրոցի կազմակերպական կառուցվածքի քննարկումը տեղափոխվեց հաջորդ նիստ ,քանի որ դպրոցի տնօրենի պաշտոնակատար Հ.Նադիրյանը պատրաստ չէր ներկայացնելու դրանք:

Լսեցին 3 Երևանի թիվ 184 դպրոցի տնօրեն Տ.Մելքոնյանին:Վերջինս հարց բարձրացրեց ներքին գնահատման հանձնաժողովում խորհրդի անդամներից ներգրավելու մասին և առաջարկեց՝ յուրաքանչյուր դպրոցից ներկայացված երկու անդամները դառնան իրենց դպրոցների ներքին գնահատման հանձնաժողովի անդամներ:

Խորհրդի բոլոր անդամները քվեարկեցին կողմ:Առաջարկը ընդունվեց միաձայն:

Ի գիտություն ընդունելով առցանց նիստի քվեարկության արդյունքները՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների կոլեգիալ կառավարման խորհուրդը

Որոշեց

1. Հիմք ընդունել բոլոր ելույթ ունեցողների հաղորդումները և հավանություն տալ դրանց :

2. Հաստատությունների ներքին գնահատման հանձնաժողովներում ներգրավել տվյալ հաստատության խորհրդի անդամ հանդիսացող ներկայացուցիչներին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Լ. Մկրտչյան

Քարտուղար՝ Ա. Ճահբազյան

Անդամներ՝ Ա. Խաչատրյան

Գ. Բալեյան

Ա. Միքայելյան

Մ. Զաքարյան

Ն. Միլիտոնյան

Գ. Չոբանյան

Լ. Մկրտչյան